



Հայկական գիտահետազոտական հանգույց Armenian Research & Academic Repository



Սույն աշխատանքն արտոնագրված է «Մտեղծագործական համայնքներ
ոչ առևտրային իրավասություն 3.0» արտոնագրով

This work is licensed under a Creative Commons Attribution-NonCommercial
3.0 Unported (CC BY-NC 3.0) license.

Դու կարող ես.

պատճենել և տարածել նյութը ցանկացած ձևաչափով կամ կրիչով
ձևափոխել կամ օգտագործել առկա նյութը ստեղծելու համար նորը

You are free to:

Share — copy and redistribute the material in any medium or format

Adapt — remix, transform, and build upon the material

631.5

26675.


2-14

Рундирундир, П.

турдир рундирундир

турдир: 034.

356





ՍԽԻ ՀՈԳԺՈՂԿՈՄԻՏ
ԿՅՈՒՆԱՏՆԵՍԱԿԱՆ ՀՍՆՐԱՄԱՏՁԵԼԻ ԳՐԱԴԱՐԱՆ
№ (8) 99

Պ. ԲԱԼԱՆԹԱՐՅԱՆ

ԲԵՐՔԱՏՎՈՒԹՅԱՆ ԲԱՐՁՐԱՑՈՒՄԸ
ՅԵՎ
ՀՈՂԻ ՄԵԱԿՈՒԹՅՈՒՆԸ

ՀԱՅԿԱՆԱԳՐԱԴԱՐԱՆ

ՊԵՏԶՐԱՏ 1930 ՅԵՐԵՎԱՆ

ՀԱՍԻՀ ՀՈՂԺՈՂԿՈՄԻՏԵՍ
ԳՅՈՒՂԱՏՆՏԵՍԱԿԱՆ ՀԱՆՐԱՄԱՏՋԵԼԻ ԳՐԱԴԱՐԱՆ
№ 8 (99)

Պ. ՔԱԼԱՆԹԱՐՅԱՆ

ՍՏՈՒԳԱՆԵ Է 1961 թ.

ԲԵՐՔԱՏՎՈՒԹՅԱՆ ԲԱՐՁՐԱՑՈՒՄԸ
ՅԵՎ
ՀՈՂԻ ՄՇԱԿՈՒԹՅՈՒՆԸ

A $\frac{21}{17956}$



ԳԵՏԱՐԱՏ 1930 ՅԵՐԵՎԱՆ

Հրատ. № 1366

Գրառնպ. № 5470 (բ) Պատ. № 783 Տիրաժ 5000

Պետհրատի լեկտորի տպարան Յերևանում.

ԲԵՐՔԱՏՎՈՒԹՅԱՆ ԲԱՐՁՐԱՑՈՒՄԸ ՅԵՎ ՀՈՂԻ ՄՇԱԿՈՒԹՅՈՒՆԸ

Հողի բերքատվութեան բարձրացումը կախ-
ված է հետևյալ չորս գլխավոր պայմաններից—
հողի մշակութիւնից, պարարտացումից, տեսա-
կավոր սերմեր ցանելուց, մուլախոտերի և բույ-
սերի վնասատուների ու հիվանդութիւնների
դեմ պայքարելուց։ Ուրեմն, յեթե մենք ցանկա-
նում ենք մեր հողերի բերքատվութիւնը բարձ-
րացնել, վոր Յեվրոպայի առաջավոր յերկրնե-
րի բերքատվութեան հետ համեմատած շատ ցածր
է, պետք է այս չորս գլխավոր պայմանները կա-
տարենք։ Այսինքն՝ հողը իր ժամանակին և կա-
նոնավոր մշակենք, պարարտացնենք գոմաղբով և
արհեստական պարարտանյութերով, տեսակավոր
սերմեր ցանենք, ուժեղ պայքար մղենք մուլա-
խոտերի և բույսերի վնասատուների և հիվան-
դութիւնների դեմ։

Հայաստանի պայմաններում այս բոլորին
ավելանում է նաև մի այլ պայման, վորի դերը
նույնպէս շատ մեծ է բերքի քանակը ավելաց-
նելու համար, դա ջրի խնդիրն է, վոր մեր վո-

ռոգվող դաշտավայրում սահմանափակում ե մշա-
 կելի տարածութիւնները, իսկ անջրդի վայրե-
 րում, մանավանդ մեր նախալեռնային շրջանում՝
 առաջին հերթին վորոշում ե բերքի քանակը։
 Մինչդեռ վոռոգվող դաշտավայրում ջրի պակա-
 սութիւնը մեզ հնարավորութիւն չի տալիս
 մշակելու ամբողջ տարածութիւնը, այլ սահմա-
 նափակվում ենք Արարատյան դաշտի այն շնչին
 մասով, վորի համար բավականաչափ ջուր ու-
 նենք, անջրդի, նախալեռնային գոտում, բերքի
 քանակը վորոշվում ե այն ջրով, վոր գտնվում ե
 հողի մեջ։ Վորքան հողում շատ ջուր լինի, այն-
 քան ել բերքը բարձր կլինի, և վորքան քիչ ջուր՝
 այնքան ել ցածր բերք։ Յեւ, վորովհետեւ հատկա-
 պես այս շրջաններում ել անձրևներ քիչ են
 գալիս, կլիման չոր ե, հողը չորացնող քամիներ
 անպակաս, ուստի այստեղ վորք ի շատե կա-
 նոնավոր բերք ստանալու համար, պետք ե այն-
 պես անել, վոր հողի մեջ վորքան կարելի ե շատ
 ջուր լինի, այսինքն անձրևների և ձմրան ձյան
 ջուրը ջգտորշիանա հողից, այլ մնա հողի մեջ և
 մեր ցանած բույսերի կողմից ոգտագործվի։ Իսկ
 այդ կարելի յե միմիայն հողը կանոնավոր մշա-
 կելու միջոցով։

Բույսերի աճելու, սնվելու և զարգանալու
 համար անհրաժեշտ ե ջուր, սնունդ և ոդ։ Այս

բոլորը հողերի մեջ կան, բայց թե ի՞նչ չափով
են դրանք դառնում հողի մեջ, ուրեմն հողը բույ-
սերին վորքան հնարավորություն է տալիս կա-
նոնավոր կերպով դարգանալու և սնվելու, դա
ևս իր հերթին կախված է հողի մշակությունից:

Յերբ մենք ամառը բերքը հավաքելուց հետո
հողերը դիտենք, մանավանդ հնձից մի քանի որ
հետո՝ կտեսնենք, թե հողը վորքան է պնդացել և
չորացել և վնչ միայն բույսի արմատները չեն
կարող մանել այդպիսի հողի մեջ, այլ հույնիակ
շատ անգամ դութանով վարելն անհնար է լի-
նում:

Պարզ է, վոր այդպիսի պնդացած և չորա-
ցած հողի մեջ վնչ բավական քանակությամբ
ող կա և վնչ էլ մանավանդ ջուր, վորովհետև
այստեղ հողի մասնիկները միմիանց վրա խիստ
կերպով դարսված են լինում և նրանց միջի
ծակոտիները շատ փոքր, են ուստի և ողի ու ջրի
համար տեղ չկա: Յեւ վորովհետև փոքրիկ, նեղ
ծակոտիների միջով (մազական անոթներ) ջուրը
ինքն իրեն հեշտությամբ վեր բարձրանում է,
ուստի հողի յերեսից ջուրը հեշտությամբ ել գո-
լորշիանում է: Վորքան հողի յերեսը չորանում է,
այնտեղից ջուրը հեռանում է, այնքան էլ այդ
նեղ ծակոտիներով հողի ներքին շերտերից ավե-
լի շուտ ջուր է բարձրանում նրա յերեսը և այն-

տեղից նորից գոլորշիանում եւ Յեվ այսպես ան-
ընդհատ պինդ հողի միջից ջուրը գոլորշիանում
ե, հեռանում մինչև նրա վերջին կաթիլը, և աշ-
նանը, ցանքի ժամանակ, փոշ միայն հողի յերե-
սըն ե չոր լինում այլ նաև նրա ներքին շերտը:

Հողի մշակության գլխավոր նպատակն ե,
ուրեմն, պնդացած հողերը փխրացնել, նրա միջի
ծակոտիները շատացնել, փորոնք կլցվեն ոգով,
նրա մեջի ջրի գոլորշիացումը կդանտաղի և հողը
իր մեջ ավելի շատ ջուր կպահի, նա այլևս այն-
պես չի պնդանա: Հետագայում նրա մշակությու-
նը կհեշտանա և բույսերի արմատներն ել հեշ-
տությամբ կարող են մտնել հողի մեջ ու զար-
գանալ: Բույսերը այնտեղ կգտնեն անհրաժեշտ
քանակությամբ ոգ և ջուր, առանց փորոնց նրանք
կանոնավոր աճել և զարգանալ չեն կարող:

Ուրեմն ի՞նչպես անել, փոր հողերը բույսերի
համար անհրաժեշտ հատկություններն ունենան,
ջուր և ոգ պարունակեն իրենց մեջ:

Այս բոլորը կախված ե հողի կանոնա-
վոր և ժամանակին մշակելուց, փորից և առա-
ջին հերթին կախված ե հողի բերքատվությունը:

Բացի դրանից, հողի մշակությունը նպա-
տակ ունի նաև նախկին բերքի մնացորդները և
մոլախոտերը փոշնազանել և այդ բոլորը, նաև
պարարտանյութերը (գոմաղը, արհեստական

պարարտանյութեր և այլն) հողի մեջ հալասա-
րապես տարածել, փորպեսզի մինչև հետևյալ
բույսերի ցանելն այդ նյութերը քայքայվեն, նը-
րանց միջի սննդատու նյութերը բույսերի հա-
մար մատչելի դառնան:

Հողի մշակության այս նպատակներից ել
բղխում ե նրա մշակության ժամանակը և ձե-
վերը:

Հողի մշակությունը պետք ե սկսել բերքը
հավաքելուց անմիջապես հետո: Սա ունի յերկու
գլխավոր նշանակություն: Առաջինը՝ մոլախոտե-
րի փոխհացումն ե, յերկրորդը՝ ջրի խնայողու-
թյունը:

Բոլորին ել հայտնի ե, վոր մոլախոտերի մի
մասը հասնում ե հացահատիկներից առաջ կամ
նրանց հետ միասին. սրանց հասած սերմերը
թափվում են հողի մեջ և հետևյալ տարին բըս-
նում, աղբոտում են մեր արտերը և նրանց
բերքը պակասացնում: Բայց մոլախոտերի մի մա-
սը արտերում, կուլտուրական բույսերի ստվերի
տակ արագ չի աճում, այլ մնում ե նվազ: Ար-
տերը հնձելուց հետո, այս մոլախոտերը ստվե-
րից ազատվում և հնարավորություն են ստա-
նում արագորեն աճելու, ծաղկելու և սերմեր
տալու: Ահա այս մոլախոտերը փոխհացնելու հա-
մար ե, վոր արտերը հնձելուց հետո, անմիջապես

պետք ե հողը վարել վորպեսզի այդ մուխոտե-
րը վոչնչանան և հնարավորութիւնն չունենան
ծաղկելու և սերմեր տալու: Բացի դրանից, վե-
րը տեսանք, վոր ստվերից ազատվող հողի յերե-
սը արագութեամբ չորանում և հողի մեջ գըտ-
նվող ջրի վերջին կաթիլները արագութեամբ
գոլորշիանում են ու կորչում: Այդ ժամանակ
հողը վարելով, մենք փխրեցնում ենք նրա յերե-
սը և դրանով խանգարում ենք ջրի գոլորշիաց-
մանը:

Բայց վորովհետև հնձի ժամանակ գյուղա-
ցիները սաստիկ զբաղված են բերքահավաքի աշ-
խատանքով, ուստի վարելու համար վոչ իրենք
են ազատ և վոչ ել լծկան տավարը, ուստի այս
դեպքում հողը կանոնավոր կերպով գութանով
վարելու հնարավորութիւնն չկա, ուստի անհրա-
ժեշտ ե այդ ժամանակ հողը վարել վոչ թե իր
ամբողջ խորութեամբ 15—20 սանտիմետր (4—5
վերշոկ), այլ բավական ե միայն հողի յերեսը
սևացնել, վարելով նրան 5—10 սանտիմետր խո-
րութեամբ (1—2 վերշոկ): Մրա համար գործ են
ածում չորս խոփանի գութաններ, իսկ տրակ-
տորով աշխատելու դեպքում ավելի շատ խոփեր
ունեցող գութաններ:

Մեզ կարող են առարկել, թե այդ աշխա-
տանքը նույնպես անկարող են կատարել գյու-

դացիները աշխատող ձեռքերի և լծկանների այլ աշխատանքներով զբաղված լինելու պատճառով։ Այդ ճիշտ է, իհարկե, միմիայն անհատական տնտեսությունների նկատմամբ, իսկ կոլլեկտիվ տնտեսությունները կարող են յեւ պարսավօր են աշխատանքը այնպես դասավորել, վոր հնարավորություն ունենան այդ անհրաժեշտ աշխատանքը կատարելու։ Այս դեպքում նրանք աշխատող շուտ հնարավորություններ ունեն, վորոնցից ամենաեականը նրանց ունեցած տրակտորներն են, վորոնց ոգնության են գալիս նաև մեքենատրակտորային կայանները իրենց տրակտորներով։ Ուստի կոլլեկտիվ տնտեսությունները պետք է ամեն կերպ աշխատեն խողանավարը իր ժամանակին կատարել, վորովհետև հետագա տարվա բերքը խոշոր չափով կախված է այդ աշխատանքի ժամանակին կատարելուց։

Բացի մոլախոտեր, վոչնչացնելը, ուրիշ ինչ նշանակություն ունի բերքը հավաքելուց անմիջապես հետո հողի յերեսը սևացնելը։

Հողի յերեսը սևացնելով, մենք նրա վերին շերտը փխրեցնում ենք և դրանով ուժեղ կերպով պակասեցնում ջրի գոլորշիացումը։ Ջրի գոլորշիացումը դադարեցնելու հետևանքով հողում շատ ջուր է մնում և յերեսանց սևացրած հողը չի պնդում, մնում է փափուկ և աշունը նրավարե-

լը շատ ե հեշտանում: Բացի այդ, յերեսը սևացրած հողում բույսերի արմատները, խողանը և մոլախոտերը հեշտությամբ քայքայվում են, նրանց միջից սննդատու նյութերը լուծվում են և բույսերի համար մատչելի են դառնում: Այս պրոցեսների ժամանակ և նրանց ու այլ ուժերի ոգնությամբ քայքայվում են նաև հողի այլ մասերը և նրանց մեջ գտնված, բույսերի համար անմատչելի սննդանյութերը նույնպես քայքայվում և լուծելի են դառնում: Իսկ այս բոլորը կարևոր ե հետագա ցանվող բույսերը սննդանյութերով ապահովելու տեսակետից:

Այնուհետև բերքի հավաքելու և նրա հետ կապված այլ աշխատանքները վերջացնելուց հետո, յերբ նույն հողերը աշնանը պետք ե ցանվեն, անհրաժեշտ ե, վորքան կարելի յե, հողերը խորը վարել, վորպեսզի հողը մինչև ցանքսը ժամանակ ունենա հասունանալու, այսինքն նրա հատիկները միմիանց հետ միանան—կնձիկներ կապեն, բերքի մնացորդները (արմատներ, խողան, մոլախոտեր և այլն) քայքայվեն և հողը հարստանա լուծվող սննդատու նյութերով: Այս վարը անելուց հետո, հողերը պետք ե փոցխել զիդզազ փոցխով և աշնանը արդեն ցանել:

Իսկ յեթե հողերը հատկացվել են դարնացանի, դրա համար պետք ե սևացած խողանը

վարել ուշ աշնան, մնացած դաշտային աշխատանքները վերջացնելուց հետո: Առհասարակ պետք է գյուղատնտեսական աշխատանքները այնպես դասավորել, վոր ամեն անգամ դարնանացանքին հատկացվելիք բոլոր հողերը վարվեն աշնանից, մանավանդ այն հողերը, վորտեղ պետք է ցանվեն բամբակ, ճակնդեղ և կարտոֆիլ:

Խնչու պետք է դարնանացանին հատկացված հողերը վարել աշունը, ինչ նշանակութուն ունի աշնան վարը:

Աշնան վարը ունի մի քանի նշանակութիւն—ա) աշունը, վարած հողը յերկար ժամանակ մնալով փուխը դրության մեջ և առանց բույսերի, թե՛ աշնան տաք յեղանակին և, թե՛ գարնանը ձյունը հալվելուց հետո, յերկար ժամանակ ունի հասունանալու, կնձկային կազմութիւն ձեռք բերելու, վորի հետևանքով թե՛ նրա ջուր պահելու ընդունակութիւնն է մեծանում և թե՛ նա իր մեջ շատ ոգ է պարունակում: բ) Վարելու ժամանակ առաջացող կոշտերը ձմրան ցրտի ազդեցութիւն տակ քայքայվում, փշրվում են և դարնանը փոցխելու ժամանակ հավասարապես տարածվում են հողի յերեսին և հետևապես հողի յերեսը հարթ է լինում և կոշտերից ազատ:

գ) Յրտի ազդեցության տակ հողի հասունանալը արագանում է, արագանում են նրա կրնձ-

կային կազմութիւն ձեռք բերելը, իսկ հողի
աննդատու նյութերը նույն ցրտի ազդեցութեան
տակ լուծվում և բույսերի համար մատչելի են
դառնում: Հետևապես աշնանը վարած հողի մեջ
գարնանացանները ծլելուց հետո անմիջապես
ապահովված են լինում աննդանյութերով և ա-
րագությամբ աճում են:

դ) Աշնանավարի չորրորդ և կարևորագույն
նշանակութիւնը այն է, վոր աշնանից փխրա-
ցրած հողերն իրենց մեջ մեծ քանակությամբ
ջուր են կուտակում: Մինչդեռ աշնանից չհերկ-
ված հողերի վրա յեկած անձրևների և ձյունի
հալվելուց առաջացող ջրերը, մանավանդ թեք
տեղերում, հոսում են հողի յերեսից և հեռանում,
վորովհետև պնդացած հողերը ջուր քիչ են ծը-
ծում:


Բացի դրանից հերկած հողերը մեծ քանա-
նակությամբ ձյուն են հավաքում իրենց վրա,
հատկապես տկոսների և այլ փոսերի մեջ վորոնք
առաջանում են վարելու ժամանակ:

Աշնան հերկը նույնպես նպաստում է մո-
լախոտների վոջնչացման, վորովհետև աշնանը
հերկված հողերի մեջ գարնանը շատ շուտով
սկսում են ծլել մոլախոտների սերմերը և ցան-
քից առաջ կատարվող փոցխելու ժամանակ նը-
րանք ջլատվում են և վոջնչանում:

Ուրեմն լավ բերք ստանալու համար չպետք
 և հողի յերեսը չորս կամ ավելի խոփանի գու-
 թաններով սեպցնել հունձը վերջացնելուց հետո
 անմիջապես և տալ աշնանը վարել 15—20
 սանտ. խորությամբ և թողնել այդպես մինչև
 աշուն, վորի հետևանքով գարնանը ցանված սեր-
 մերը և նրանցից առաջացող բույսերը իրենց
 զարգացման համար նպաստավոր պայմաններ
 կգտնեն հետևապես հաջողությամբ կաճեն ու մեծ
 ել բերք կտան:



A 17956



ԳԻՆԸ 3 ԿՈՊԵՆԿ ՄԱՍ. (16 կշ)

631.5


բ - 14



П. КАЛАНТАРЯН

Повышение урожайности и обработка земли

Госиздат ССР Армении
Эривань — 1930



ԳԱՍ Հիմնարար Գիտ. Գրադ.



FL0008913

A $\frac{11}{17956}$